Տարեմուտ

Բացվել են «Շնորհալի» դպրոցի դռները. նոր ուսումնական տարվա մեկնարկ

Սույն թվականի Օգոստոսի 27-ին, Վաշինգտոնի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից դպրոցում հնչեց նոր ուսումնական տարվա բարի ավետիսը։ Եկեղեցու հովանու տակ գործող «Շնորհալի» դպրոցը ևս մեկ անգամ իր հյուրընկալ դռները բացեց Վաշինգտոնի հայ համայնքի երեխաների առջև և հանդիսությամբ դիմավորեց իր սաներին։ Ընդունելության արարողությունն ուղեկցվեց Գիտելիքի և դպրության օրվա տոնակատարությամբ։

Աշակերտները հնարավորություն ունեցան հանդիպել և ծանոթանալ իրենց ուսուցիչների հետ, վերհիշել արդեն ձեռք բերված գիտելիքները և սկսել հույսերով ու հույզերով լի նոր ուսումնական տարի՝ գիտելիքներով հարստանալու, նոր արժեքներ ճանաչելու և նոր ընկերներ ձեռք բերելու ակնկալիքով։

Աշակերտներն իրենց ծնողների հետ առիթ ունեցան նաև մասնակցելու սուրբ պատարագին, որի ընթացքում նրանց համար իրականացվեց հատուկ օրհնության արարողություն։ Եկեղեցու քահանա Տեր Հովսեփ Կարապետյանը՝ կարևորելով կրոնի, հայոց լեզվի, մշակույթի, ավանդույթների և դրանց ուսուցման ազգանվեր գործի դերը մեր կյանքում, օրհնեց աշակերտներին և մաղթեց իմաստություն՝ նոր ուսումնական

տարին հնարավորինս արդյունավետ ու նոր ձեռքբերումներով լի դարձնելու ակնկալիքով:

Ծնողները մասնակցեցին տարվա առաջին համադպրոցական ծնողական ժողովին, որի ընթացքում ներկայացվեցին դպրոցի առաքելությունը, տեսլականը և արժեքները: Դպրոցի տնօրեն Նունիկ Նշանյանը և Տեր Հովսեփ քահանան շեշտեցին ծնողների մասնակցության կարևորությունը դպրոցի աշխատանքներին՝ ուժեղ դպրոցական համայնք կառուցելու և ավելի ապահով և մեր երեխաների համար բարելավված ուսումնական միջավայր ապահովելու համար: Նրանք ընդգծեցին, որ ծնողների ներկայությունը իրենց երեխաների դպրոցական կյանքում կամրապնդի նրանց ինքնավստահությունը, կբարելավի ինքնագնահատականը և կբարձրացնի նրանց ուսումանական մասնակցության ցանկությունը:

Դպրոցում կրթական նոր ծրագրերը կառուցվել են հիմնականում հաշվի առնելով համայնքի պահանջներն ու կարիքները: Այս տարի դպրոցը կշարունակի առաջարկել «Խոսակցական հայերեն»-ի կրթահարթակը, որի շրջանակներում աշակերտները կզարգացնեն իրենց բանավոր խոսքի հմտությունները: Պատմության դասաժամերը կդասավանդվեն որպես առանձին առարկա և, քանի որ երաժշտությունն ու արվեստը մեր հայեցի դաստիարակության անբաժանելի ու կարևոր մասնիկն են կազմում, դպրոցում նաև դասավանդվելու են երաժշտական արվեստի դասաժամեր:

Դե՛, իսկ կրոնի, հայոց լեզվի և մեր հարուստ ավանդույթների դասավանդումը, հայեցի ոգով և մտածողությամբ, Հայաստանի և հայ ժողովրդի բարգավաճման, զարգացման և առաջընթացի երազով հուսավառված հայեցի սերունդ կրթելու ցանկությունը Հայ եկեղեցու և Շնորհալի դպրոցի մշտական առաջնահերթություններն ու հիմնական մղիչ ուժն են: